




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Դ. Քանանյան  
Հ. Տառնայի Եւրոպ  
յան շուկայ

1888

891-99

Դ-17



30-17

ՅՕԳՈՒՏ ՄԱՆԻՒ ԸՆՏԱՆԻՔԻ



# ԷՄՄԱՆՈՒԷԼ ՄԱՆԻՒ ԹԱՂՈՒՄՆ

Քրեյ և Հրատարակեյ  
ԲԱՐՍԵՂ ՔԱՄԱԼԵԱՆ

ТИФЛИСЬ. 1888.

Типографія А. А. Михельсона, Голов. просп., № 12.



891.33

4-17

ՅՕԳՈՒՏ ՄԱՆԻՒ ԸՆՏԱՆԻՔԻ



# ԷՄՄԱՆՈՒԷԼ ՄԱՆԻՒ ԹԱԴՈՒՄՆ

1001  
4500

Գրեց և հրատարակեց  
ԲԱՐՍԵՂ ՔԱՄԱԼԵԱՆ

493



20 03

ТИФЛИСЬ. 1888.

Типографія А. А. Михельсона, Голов. просп., № 12.



Дозволено цензурою. Тифлисъ, 17-го ноября 1888 года.

† Մ Ա Ն Ի Ի

Անմոռանալի լիշատակին

Հոգիս է ճնշվում, միտքս մոլորվում  
Երբ քո մարդասէր անունդ եմ լիշում,  
Արդ սառն գրկում քո գերեզմանի  
Նահատակ պատուի, քնչալէս ես հանգչում:

Ագէլդ ու որդիքդ ո՛ւմ լանձնեցիր  
Որ շահասերին կեանքդ զոհեցիր,  
Այո՛, յուսալով որ, կայ անաչառ,  
Ահեղը վերին, նորա՛ն յուսացիր:...

Քո արիւնակից եղբայր հարազատ  
Մաղթումէ քեզի կեանք վերին ազատ,  
Սգաւոր կնօջդ մխիթարութիւն  
Եւ զաւակներիդ սուրբ երջանկութիւն:

Բարսեղ Քամալեան.



## Մ ա ն ի ի Թ ա գ ու ժ ր

Այս օրերս Թիֆլիսում կատարուեց մի արտօտովոր, մի շատ Հազուադիւտ երևոյթ: Այդ երևոյթն էր Էմմանուէլ Մանիի անձնասպանութիւնը: Ո՞վ էր Մանին. Թիֆլիսի բնակիչների Համարեա մի աննշան պրօցենտն էր ծանօթ նրա հետ. բայց այսօր, երբ նա ատրճանակի մի Հարուածով վերջ տուեց իւր դեռ պիտանի կեանքին. կայծակի արագութեամբ ամեն տեղ, ամեն անկիւն և ամեն ծակ ու ծով լուրեր տարածուեցան այդ մասին: Այդ օրուանից, թէ մեծի, թէ փոքրի, թէ Հայիի, թէ ռուսի, թէ վրացու, թէ թուրքի, թէ հրէայի և թէ միով բանիւ ամեն ազգի և ամեն դաւանութեան պատկանող անձնաւորութեան բերանից լսուեցան նախ ու հառաջանքի սիրտ մաշող և տխուր ձայներ: Ամբողջ քաղաքի բնակիչներին պատեց տխրութեան և սգոյ քող, ամենքը ափսոսումէին նրան, որ անկիւնը անցնէր մարդ կամ որ կողմը գնար և օրուայ որ ժամանակ, ամեն բոլէ, ամեն քալլափոխում և ամեն ոք խօսումէր, պատմում էր նրա մասին, ամենի բերանից լսում էր «Մանի» անունը: Միով բանիւ տխրութիւնը ընդհանրական էր:



Մանի, Մանի և Մանի. բայց ո՞վ էր վերջապէս Մանին: Մի երեւելի վիպասան էր, ո՛չ, կամ մի երեւելի բանաստեղծ էր, ո՛չ, մի աշխարհահռչակ նկարիչ էր, կամ դերասան, կամ երաժիշտ, կամ հոգեւորական, ո՛չ, ո՛չ, և ո՛չ:....

Մանին ոչ առաջինն էր, ոչ երկրորդը և ոչ երրորդը: Նա մի այնպիսի պաշտօնեայ էր, որի տեսակները հազարներով կարելի էր գտնել ամեն մի քաղաքում: Այո՛, Մանին ո՛չ ալլ ի՛նչ էր, եթէ ոչ առեւտրական դասին պատկանող մի անձնաւորութիւն: Անձնաւորութիւն, բայց այնպիսի մի անձնաւորութեան մասին է խօսքս, որի նմանը շատ սակաւ կարելի է գտնել, որի ազնիւ բնաւորութեամբ մարդ, բառիս ամենաընդարձակ նշանակութեամբ, շատ սակաւ կարելի է գտնել ոչ թէ միայն վիպասանների մէջ, ո՛չ թէ միայն բանաստեղծների, կամ աշխարհահռչակ նկարիչների, կամ դերասանների, կամ երաժիշտների և կամ հոգեւորականների մէջ. — ալլ թէ նրա նմանը շատ սակաւ և մինչև անգամ աննկատելի կարելի է համարել ողջ մարդկութեան մէջ և ողջ աշխարհիս երեսին:

Ո՞վ էր նա. հրեշտակ. — ո՛չ, հրեշտակ չէր, բայց մարդ էր, նա մարդ էր մարդկութեան բուն նշանակութեամբ. նա մի այնպիսի մարդ էր որի վրայ Աստուած դրոշմել իր իւր կերպարանքի կնիքը, որի պատկերի վրայ ամեն մի անհատ կարող էր նշմարել երկիւղ, պատկառանք, ազնւութիւն իր բոլոր զգեցումով, այո՛, նա ազնւութեան տիպարն էր, նա մի պարզ հայելի էր մարդկութեան համար, որի մէջ ամփոփուած էր մարդկային բոլոր բարի և շահասէր գործերը, շահասէր եմ ասում, որ չպէտքէ հասկանալ շատ փողերի և հարստութեան սիրող, ալլ շահասէր և շահաւէտ դէպի մարդկութիւնը, դէ-

պի մարդասիրութիւնը, Աստուածահաճոյ գործերը, որոնք նպաստում էին ոչ թէ իրեն կամ միայն իրեն, ալլ և շատ ու շատ ուրիշներին: Նա հաւասարապէս սիրում էր ողջ մարդկութիւնը, լինէր նա հայ թէ ռուս, լինէր վրացի թէ թուրք, հրէայ թէ լեզգի և այլն և այլն... Նա բոլորին էլ նայում էր հաւասար աչքով և սիրում էր հաւասար սիրով: Նա իր այդ մարդասիրութեան պատճառով, իր բարի վարմունքով ու իր ազնւութեամբ դարձաւ սիրելի ոչ թէ միայն Ռումինեայի և Վեննայի հասարակութեանը. ալլ և այն ամեն քաղաքի հասարակութեանը ուր գնում էր նա: Այդ իսկ սիրով սիրեց նրան և Կովկասի հասարակութիւնը, մեծ մասամբ վաճառականութեան դասին պատկանող, որովհետև նա իր գործերի և պարասլմունքի պատճառով իր յարաբերութիւնները աւելի մտերմացրել էր վաճառականական դասի հետ: Այդ պատճառաւ էլ վաճառականների մեծամասնութիւնը ճանաչում էր նրան:

Կ'Ժբաղդաբար շատ քիչ և մինչև անգամ ոչինչ բան չենք կարող ասել նրա կենսագրութեան մասին որովհետև, Թիֆլիսում մի քանի յայտնի մարդոց դիմեցինք բայց նրանք էլ չգիտենալով հանգուցեւի կենսագրութիւնը չկարողացան մեզ բաւականութիւն տալ, և դիմեցինք այն մարդոց որոնք նրա ամենամտերիմ ծանօթներն էին: Իսկ մենք չսպասեցինք Վեննայից տեղեկութիւն ստանալու, որովհետև այդ շատ կուշանար, բայց այսքանս միայն կարողացանք իմանալ որ հանգուցեալ էմմանուէլ Մանին ծնուած է Ռումինեայում 1843 թուին. թէ որտեղ է կրթութիւն ստացել և իր կեանքի մէջ ինչպիսի նշանաւոր արկածների է ենթարկուել, ներողութիւն ենք խնդրում ընթերցողից որ այդ մասին լռում ենք:



Մանին վաճառականական ասպարիզում մեծ դեր էր կատարում և բաւականի հռչակուած էր նրա անունը թէ իր պաշտօնով և թէ հարստութեամբ: Նա ամուսնացած էր և ունի զաւակներ, նրա ընտանիքը այժմ գտանվում է Վէննայում:

Վերջապէս անգուլթ բաղդի ելեէջերի մէջ Մանին զըրկվում է իր բոլոր հարստութիւնից և ընկնում է վերին աստիճանի աղքատութեան մէջ, բայց այդ դեռ բաւական չէ, նրա վրայ բարձվում են և մի քանի տասնեակ հազար պարտքեր: Խեղճ Մանին հնազանդվում է ճակատագրին և գլուխը խոնարհած առաջ է քայլում մի պաշտօն ձեռք բերելու համար. գոնէ իւր և իւր ընտանիքի առօրեայ ապրուստը հալթհալթելու և սովամահ չլինելու համար: Եւ ահա կարծես բաղդի ժպտի մի ճառագայթը փայլելով նրա վրայ կարողանում է Պօլեակի կօշկեղէնի գործարանում մի պաշտօն ձեռք բերել Վէննայում: Ազնիւ մարդը սկսում է իւր ամբողջ ջանքով և նոյն հեզ ու խոնարհ սրտով, նոյն ազնիւ բնաւորութեամբ ծառայել: Բայց աւանդ, երանի թէ բոլորովին չուղարկէին նրան Թիֆլիս: Գործարանատէր պ. Պօլեակը մի քանի ժամանակից յետոյ տալով նրան մի քանի հատ կօշիկների նմուշներ 1888 թուին Նոյեմբեր ամսին ուղարկում է Թիֆլիս որպէս զի այդ նմուշները ցոյց տալ Թիֆլիսի վաճառականներին և նրանցից պատուէրներ ընդունի: Նա իջևանում է Թիֆլիսի «Կովկաս» հիւրանոցը:... Նայիր չարագործ բաղդին որ խեղճ Մանին Թիֆլիսում ունենումէ պարտատէր և մի քանի օրից յետոյ նրա պարտատէրը լսելով նրա գալը Թիֆլիս, իսկոյն իւր գովումենտների և թղթերի զօրութեամբ ուղարկում է իւր փաստաբանին և վեր են գրում նրա ոչ թէ միայն կօշիկները այլ և

նրա վրայի վերարկուն ծոցի ժամացույցը և այլն և այլն:...

Խեղճ Մանին այդ բոլորը չկարողանալով տանել, և իրեն պատիւը բոլորովին խայտառակուած և ոտնակոխ արած համարելով աւելորդ է համարում ապրել այնուհետեւ աշխարհիս երեսին: Նա աւելի բարձր էր դասում մահը, քան անպատուած կեանքը և նա վճռում է:...

Մի դժբաղդ օր, նա իւր սենեակում, այն է Նոյեմբերի 8-ին «Կովկաս» հիւրանոցում, առաւօտեան մօտ տասն ժամին վերցնում է ատրճանակը և արձակումէ իր վրայ: Ատրճանակի անգուլթ գնդակը վերջ է դնում նրա կեանքին և յաւիտեան փակվում են մարգասէր և ազնիւ Մանիի աչքերը:

Այսպիսով Մանին դարնումէ իր պատուի անմեղ գոհը: Նա իր սեղանի վերայ թողնում է ծրարած մի քանի նամակներ, մի քանիսը նրանցից Գերմաներէն լեզուով, իսկ մի քանիսը հայերէն, նաև մի նամակ իր կնոջը իր սիրելի Ագէլին: Այդ նամակը անշուշտ ամեն մի մարդու սրտին կարող է ազդել. ամեն մէկի սրտում խորը թափանցել և ամենի սրտի քնքույշ լարերը կարող է տխուր կերպիւ հնչեցնել և ամեն մէկի սրտի խորքերից դառն հառաչանքներ արձակել տալ:

Ահա նամակի բովանդակութիւնը, որ արտագրել ենք պատուական «Մշակ» լրագրից պ. Խ. Մ.-ի լուրածից:

«Սիրելի և թանկագին Ագէլ, իմ վերջին ժամերը հասել են. ես այլ ևս չեմ կարող ապրել: Ներիր, սիրելիս, և բաղդաւոր եղիր. ներիր թանկագին Մագուստ,



մնաս բարով սիրելի Լեոն, մնաս բարով ուրեկի Ռէօ-  
գիդ, ներիր սիրելի և թանկագին Արտաշէս: Ես թող-  
նումեմ ձեզ առանց որեւէ դրամական միջոցների:  
Հաշտ ապրեցէք, սիրեցէք ձեր մօրը և Աստուած կը  
օրհնի ձեզ: Մի անիծէք ինձ: Ընդունեցէք իմ հայրա-  
կան համբոյրները, գրումեմ այս տողերը արտասուք  
թափելով, երբէք մի մոռանաք ձեր անբաղդ հօրը: Չգի-  
տես, սիրելիս, թէ ինչ կրեցի ես այստեղ: Իմ ամենա-  
լաւ բարեկամները ինձ այս գրութեանը հասցրին: Ես  
ամեն բան կորցրի,—անունս և պատիւս, և նոյն իսկ  
այն հացի կտորը, որ ես սշխառում էի ձեզ համար,  
նրանք ձեռքիցս խլեցին.... Ի՞նչու համար ապրել սրա-  
նից լեւոյ.... մի անիծէք ինձ, իմ սիրելիներ, և մի  
յուսահատուէք... Ներիր ինձ սիրելի կինս. ախ, եթէ  
դու իմանայիր, թէ ինչպէս ես տանջվում եմ... Աւելի  
չեմ կարող գրել, մնաք բարով... Ես մինչև այժմ տանջ-  
վում էի, և կարծում էի, թէ բարեկամներս ինձ կը  
փրկեն, բայց անխիղճը ոչ մի փրկանք չընդունեց: Մը-  
նաք բարով սիրելիներս, ես շատ տանջուեցի, մնաք  
բարով, և լիշեցէք դժբաղդիս».....

Շուտով կազմուեց մի մասնաժողով, մի քանի յայտնի  
և յարգելի վաճառականների դասից որի մէջ ամենագլխաւոր  
դերը կատարում էր մեծապատիւ պ. Ստանիսլաւ Չարախչեա-  
նը,—հանգուցեալին պատուաւոր յուղարկաւորութիւն անելու:  
Հանգուցեալին, անձնասպանութեան օրը տարան Թիֆլիսի  
քաղաքային հիւանդանոցը մինչև նրա թաղման օրը: Համա-  
րեայ ամբողջ շաբաթ պ. Ստանիսլաւ Չարախչեանը ամեն  
պատրաստութիւնները տեսնելուց լեւոյ նշանակեց կիւրակի  
13-ին Նոյեմբերի հանգուցեալի մարմինը հողին լանձնելու:

Եւ ահա, լուսանում է կիրակի առաւօտը: Վաղ սռա-

ւօտուանից արդէն մեծ բազմութիւն հաւաքուած էր Միքայ-  
էլեան փողոցի վերայ, ամեն դաւանութիւններին պատկանող  
հասարակութեամբ: Շքեղ զարդարուած դազաղի մէջ հան-  
գըստանում էր Մանիի մարմինը ծածկած պսակներով և ծա-  
ղիկներով թէ բնական և թէ արուեստական: Նրա գէմքը  
այնպէս գեղեցիկ էր և անվրդով որ հոգեւոյսը կարծես քը-  
նած լինէր. ոչ երեսի գծադրութիւնն էր փոխուել ոչ այլ-  
այլուել, ոչ գէմքը գունատուել և ոչ գէմքի մի մասն ան-  
գամ կնճռոտել: Այ՛ո՛ կարծես նա քնած էր, և չեմ սխալ-  
վում, նա քնած էր յաւիտենական երջանիկ քնով, նա քնած  
էր բոլորովին անմեղ և ազնիւ սրտով, նա դրած էր իւր  
յաւիտենական բնակարանում բոլորովին անվրդով. Արդեօք  
իր ընտանիքի հոգսը չէր վրդովում նրա հոգին... ո՛չ, պա-  
տասխանումեմ ես նրա տեղ, որովհետև նա յուսացաւ որ  
կայ վերին Խակը իր ընտանիքի հոգսը Նա կը քաշէ, ու-  
րեմն նա այդ կողմից էլ ապահովուած էր:

Փամի 11-ին դուրս սլացրին նրա մարմինը հողեւորա-  
կանութեան մեծ բազմութեամբ և երաժշտական խմբի տխրա-  
գին մեղեդիով: Ահագին բազմութիւնը արտասուք աչքերին  
հետևում էր դազաղին: Անցկացնելով Մանիի մարմինը քա-  
ղաքի յայտնի փողոցներով տարան Քամոյեան Սբ. Գէորգայ  
եկեղեցին ուր սուրբ պատարագի ընթացքում հողեւորական  
դասից մի քանիսը ազգու խօսքերով նկարագրեցին խուռն  
բազմութեանը հանգուցեալի ո՛վ և ինչպիսին լինելը: Պատա-  
րազը աւարտելուց լեւոյ դուրս բերելով Մանիի մարմինը  
հանգստացրին նոյն եկեղեցու առաջ փողոցում ուր և սպա-  
սում էր ժողովրդի ահագին բազմութիւն և ահա պ. Բ.  
Արուշանեանը մի սրտառուչ և ազգու դամբանական խօսեց



որի ժամանակ հասարակութեան աչքերից գլորվում էին գոհարանման արտասուքի կաթիլներ: Այնուհետև բազմութիւնը իր ուսերի վերայ տարաւ Մանիի մարմինը մինչև Երևանեան հրապարակը ուր կրկին իջեցնելով հանդիսացաւ պ. Աւետիք Եզեկեանը, սա էլ մի գեղեցիկ ճառ կարդաց, այնուհետև մի քանի ճառեր ևս կարդացուեցան հանգուցեալի դիմաց Հաւլաբարի Խօջիվանքի գերեզմանատանը և այդպիսով ծանր վշտի տակ Թիֆլիսի հասարակութիւնը իր պարտքը կատարելով և վերջին հրաժեշտը տալով Մանիի թանկագին մարմինը յանձնեց հողին և տխուր տպաւորութեան տակ ժամի Յին ցրուեցաւ:

Մենք աւելորդ ենք համարում աւելի և աւելի մանրամասնութիւնները որոնք և տպուել են թէ ռուսաց և թէ հայոց զանազան լրագրութեան մէջ, ուստի այսքանով միայն բաւականանում ենք յուսալով որ թէ մամուլը և թէ հասարակութիւնը թիֆլիսի կը ների և եթէ պակասութիւններ կամ թերութիւններ կը գտնի մեր նկարագրութեան մէջ, չի պախարակի մեզ:

Բարսեղ Քամալեան.

Թիֆլիս 17-ին Նոյեմբերի 1888 թ.

Կնգալը ցցուած Մանիի սրտին,  
Որսորդի մագերն բիզ կանգնած գլխին  
ձակատը կնճռոտ, ժանտադէմ երես  
Հողին յուսահատ, սիրտը դժողքի պէս.  
Աջ ձեռքով ցցուած մագերն է բռնած,  
.....  
.....  
.....  
Եւ դժգոյն լուսին երկնքէն դիդէ  
Մանիի արեան սուգը հառաւէ.  
Ասողերն էլ ելնեն, կապոյտը ծածկեն  
Մանիի արեան կաթիլքն հաւաքէն,  
Երկնից ցողն իջաւ, արեան ցօղ դարձաւ  
Արօտ ու ծաղկանց շունչ ու կեանք տըւաւ.  
Երկիրն էլ ծծեց Մանիի արիւն  
Տըւաւ լիութիւն. առատ բարութիւն  
Թռչունքը եկան Մանիին ողբալ  
ձլվլոցներով տխուր սուգ կարդան  
Գազանքը եկան գետին փռուեցան  
Մանիի սուգը երկինք մըռնչան,  
Ջրեր դէպ երկինք խփոջներ հանեն  
Մանիի արիւն իրենց ծոց կանչեն:  
Իսկ ծաղկանց աշխարհ՝ ախ ինչպէս ծըփայ  
Ինչ հրաշալիքով ծըփայ յառտջ գայ,  
Վարդն ունի գլխին, շուշանը սրտին,  
Մանուշակն ուսին, մեխակը թևին,  
Յասմինն աջ կռնին, ոսկեակը ձախին,  
Սմբուլ, նունուֆար բռնած է ձեռին,  
Հրաշից այս պըսակ փունջ բերէ աշխարհ  
Մանիի ճակտին դրնել հրաշափառ  
Մանիի շիրիմ ծածկել սիրաբար:



Ագէլն է եկել շիրիմիդ լալու  
 Որդիքդ են եկել քեզ համբոյր աալու,  
 Լացիր դու, Ագէլ, Մանիդ սիրելի  
 Լացէք ձեր հալըր որբեր վշտալի:

Մանին օրհնում է ձեզ սուրբ օրհնանքով  
 Բաղդաւոր լինիք. ապրեցէք սիրով.  
 Դո՛ւ, Ագէլ, օրհնիր սորա լիշատակ.  
 Մի մոռնաք, որդիք, ձեր հօրը խնամք:

Արսէն քահ. Բազրատունի.

Ձեռնարկելով այս բրօշերը յօգուտ Մանի  
 որբացեալ բնտանիքի խնդրում ենք իւրաքանչիւր  
 հայից առնելով նպաստել նրա ընտանիքին  
 և որքան կարելի է տարածել ամեն տեղ:





Handwritten text at the top of the red page, possibly a title or header.

# "P. 11. 11. 11."

Handwritten text in the middle section of the red page, appearing to be a list or series of notes.

Handwritten text in the lower middle section of the red page.

Handwritten text in the lower middle section of the red page.

Handwritten text in the lower middle section of the red page.

Handwritten text in the lower middle section of the red page.

Handwritten text in the lower middle section of the red page.

Handwritten text in the lower middle section of the red page.

Handwritten text in the lower middle section of the red page.

Handwritten text in the lower middle section of the red page.



Ներկայ տարւոյս վերջին օրերում Թիֆլիսում կը հրա-  
տարակուի

## „ԴԱՇՆԱԿ“

Բանաստեղծութիւնների, երգերի և թատրոնական կո-  
միկական կուպլետների մի ժողովածու:

Բաժանորդագրութիւնը շարունակվում է, և ի վերջե տա-  
րուաւ Դեկտեմբերի 15-ը, գրողները կը վճառեն 40 կո-  
պէկ, տպուելուց լետոյ գինը կը կրկնապատկուի: Պրուէլ կա-  
րելի է գոլովինսկի պրոսպեկտի վերջ, ռէփինովի և Նւան-  
գուլովի ափիշաների կոնտօրում:

Հրատարակիչ՝ ԲԱՐՍԵՂ ՔԱՄԱԼԵԱՆ

Գինն է 10 կոպէկ:

ՆՈՅՆ ՀՐԱՏԱՐՄԱԿՁԻ

Միւս հրատարակութիւնները:

- 1) ԵՐԵՔ ՔԱԶԵՐ Կոմեդիա 1 արարուածով:
- 2) ՍՅ ՔԵԶ ՕՅԻՆ Վօդէիլ 1 արարուածով:
- 3) ԷԼԻԶԱՅԻ ՎԻՇՏՐ (վէպիկ):

Իւրաքանչիւր գրքուկի գինն է 20

Զորրորդ հրատարակութիւնը



ՀՀ Ազգային գրադարան



NL0369952



60265